

ПСИХОЛОГИЯ

Հայ ընտանիքի հոգեբանական առանձնահատկությունները

Ներսիսյան Օ. Շ.

Փորձնական հոգեբանության և սոցիոլոգիայի «Ուրարտու» համալսարան

(Հայաստան, Երևան)

ncovinar@mail.ru

Վճռորոշ բառեր՝ ընտանիք, ամուսնություն, կին, տղամարդ, ավանդական, էգալիտար:

Свойственные черты и особенности армянской семьи

Нерсисян О. Ш.

Университет прикладной психологии и социологии “Урарту” (Армения, Ереван)

ncovinar@mail.ru

Резюме: Учитывая то обстоятельство, что обусловленное государством и обществом, вопросы волнующие широкие научные круги касающиеся семьи и брака столь огромны и различны, что предложить их готовые решения не очень легко. В семье супруги имеют определенные права и большей частью обязанности, нечто, что заметно проявляется, особенно, в армянской семье. Кстати именно супружество объединяет мужчину и женщину для «совместной и счастливой» жизни. Говоря о семье, считаем нужным отметить, что, в настоящем, понятие «супружество и семья» перестали быть тождественными.

Ключевые слова: семья, супружество, супруга, супруг, традиционная, эгалитарная.

Characteristics and features of the Armenian family

Nersisyan Ts. J.

University of Applied Psychology and Sociology “Urartu” (Armenia, Yerevan)

ncovinar@mail.ru

Abstract: Taking into consideration the fact, that vast majority is concerned about the issues related to the family and marriage in the society, and that they are so numerous and diverse, offering concrete solutions for them are not so easy. A woman and a man living in the family as spouses have certain rights and a large number of responsibilities, something that is manifested especially in Armenian families. It is the marriage that united man and woman for “inseparable and full life”. Speaking about the family, it is worth mentioning that nowadays the terms “marriage” and “family” have ceased to be the same.

Keywords: family, marriage, woman, man, traditional, egalitarian.

Ժամանակակից հոգեբանության մեջ ընդունված է այն ձևակերպումն, ըստ որի ամուսնությունը «կնոջ և տղամարդու միջև այն հարաբերությունների լեզվաբանական և սեռական գույքակերպության այն ձևերի ընդունումը, որոնք ուղեկցվում են երեխաների ծնունդով»¹:

Հետաքրքիր է նկատել, որ ըստ ռուս իրավաբան Ս. Ի. Չազորովսկու, ամուսնությունը ներառում է մի քանի տարրեր.

ա) բնական (ֆիզիկական) տարր, երբ՝ բնության կողմից մարդու մեջ առկա է հակա-

ռակ սեռի նկատմամբ ֆիզիկական ցանկություն,

բ) էթիկական տարր, որն արտահայտվում է ամուսինների փոխադարձ բարոյական կապվածության և նրանց հոգևոր ներաշխարհի փոխներգործության մեջ,

գ) տնտեսական տարր, որի արդյունքում տղամարդու և կնոջ միջև առաջացնում է տնտեսական կապ, ձևավորում նրանց ընդհանուր տնտեսությունը,

դ) իրավական տարր, որի ուժով ամուսնությամբ կապված անձինք որոշակի կարգավիճակի շնորհիվ ձեռք են բերում իրավունքներ ու պարտականություններ,

¹ Социология семьи: Учебник / Под. ред. проф. А.И. Антонова. 2-е изд., перераб. и доп. М.: ИНФРА-М, 2007. ст. 44.

ե) կրոնական տարր, որի ուժով ամուսնությունը ենթարկվում է որոշակի կրոնական կանոնների²:

Իր հերթին Կ.Պ. Պոբեդոնոսցևը նշում է, որ ամուսնությունը մի ամբողջ օրգանական միություն է, որի իմաստն արտահայտվում է բնության հիմնական օրենքում՝ երկու սեռերի միջև տարանջատված մարդկային բնույթի միասնականացման ու ամբողջացման մեջ³: Բացի այդ գոյություն ունի նաև ամուսնության վերաբերյալ այլ տեսակետ, որի կողմնակիցներ Ժ. Յուրբերխտը և Ժ. Վերմելը, նշում են, որ ամուսնությունը քաղաքացիական պայմանագիր է և հանդիսավոր ակտ, որի միջոցով տղամարդը և կինը միավորվում են համատեղ ապրելու, ընտանիք ստեղծելու և վերջինիս համատեղ նյութական ու բարոյական արժեքներով ապահովվելու նպատակով⁴:

Ամուսնության բավականին հետաքրքիր ձևակերպում է տվել Դ. Մեյերը, ըստ որի՝ ամուսնությունը դա «...տարբեր սեռի երկու անձանց միություն» է «հիմնված սիրո վրա, որի նպատակը անձի անհատականությունը հակառակ սեռի անձի անհատականությամբ լրացնելն է»⁵:

Բացի այդ նույն Դ. Մեյերի կարծիքով, որի հետ չենք կարող չհամաձայնել «բարոյական օրենքներն իրենց ոլորտ են ընդունել ամուսնության ինստիտուտը»⁶:

Ընտանիք և ամուսնություն հասկացությունները փոխկապակցված են: Ըստ Գ. Խարչևի «ընտանիքը կազմվում է կնոջ և տղամարդու միջև ազատ և կամավոր ընտրությամբ տեղի ունեցած ամուսնությամբ»⁷: Ամուսնական սերտ կապն էլ հենց ընտանիքի միջուկն է: Այլ կերպ ասած, ամուսնությունը հակառակ սեռերի միջև կոնկրետ փոխհարաբերություն է, որը հիմնված լինելով սիրո և հարգանքի վրա պետք է ուղեկցի նրանց հետագա համա-

տեղ կյանքի ընթացքում: Ամուսնությամբ սկիզբ է դրվում նոր՝ **համատեղ** կյանքի:

Խոսելով ընտանիքի մասին հարկ ենք համարում նշել, որ «ամուսնություն» և «ընտանիք» հասկացությունները դադարել են նույնը լինելուց: Ինչպես իրավացիորեն նկատել է սոցիոլոգ Գուրկոն «...ամուսնությունը կարող է ընտանիքի ձևավորման համար խթանիչ հանդիսանալ, բայց վերջին ժամանակներում արմատավորվում է առանց հարաբերությունների օրինականացման ընտանիքի ձևավորման միտումը»⁸, և որպես հետևանք հիմք է դրվում քաղաքացիական ամուսնություններին, որոնք արդեն Բուրդեյնի պնդմամբ համարվում են «յուրօրինակ գործարք, որը կողմերի միջև առաջ է բերում պարտականություններ և որոշակի իրավունքներ»⁹:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ պայմանավորված պետության և հասարակության մեջ ընտանիքին և ամուսնությանը վերաբերող հարցերը մինչև օրս էլ հուզում են գիտական լայն շրջանակներին, և դրանք այնքան շատ են ու բազմազան, որ դրանց պատրաստի լուծումներ առաջարկելը այնքան էլ դյուրին գործ չէ, ուստի միանգամայն իրավացի է հոգեբան Վ. Ջադեպինը, որ անդրադառնալով այդ հարցերի բազմազանությանը նշում է, որ դրանք «լիիրավ կերպով» կարելի է «վերագրել կյանքի «հավիտենական» հարցերին»¹⁰: Ցավոք ներկայումս ամուսնական հարաբերություններն էլ ավելի խոցելի են դարձել, այն առումով, որ ընտանիքի մոդելն ենթարկվում է փոփոխության: Ուստի ամենևին էլ դժվար չէ կոտակել, որ խնդրո առարկա հիմնահարցը ներկայումս խիստ արդիական է և կարևոր:

Ընտանիքում որպես ամուսիններ ապրող կինը և տղամարդն ունեն որոշակի իրավունքներ և մեծ թվով պարտականություններ: Հենց ամուսնությունն է, որը տղամարդուն և կնոջը միավորում է «անբաժան և լիարժեք կյանքի» համար:

² Загоровский А., Курс семейного права. Одесса, 1909, ст. 5.

³ Победоносцев К., Курс гражданского права. Т. 2, М. 2003 (Публикация по изданию 1896г.), ст. 55.

⁴ Сивохина С., Понятие брака и условия его действительности в современном праве России и Франции: диц...канд. юрид. Наук. Самара, 2006, ст. 41-42.

⁵ Мейер Д., Русское гражданское право. Ч. 2/ Д.И. Мейер. М., 1997. (По изданию 1902), ст. 348.

⁶ Мейер Д., Русское гражданское право. Ч. 2/ Д.И. Мейер. М., 1997. (По изданию 1902), ст. 348.

⁷ Խարչևի Ա., Մացկովսկի Մ., «Ժամանակակից ընտանիքը և նրա պրոբլեմները», Երևան, 1982, էջ 29:

⁸ Гурко Т. Трансформация института современной семьи // <http://medvedev.viperson.ru/data/200812/014Gurko.pdf> [дата обращения: 20.04.2016 14:33]

⁹ Бурдейный М. Семья и брак. М.: Изд-во «ВЛАДОС-ПРЕСС», 2005. С. 36.

¹⁰ Ջադեպին Վ., «Ամուսնական կյանքի մասին», Երևան, 1981, էջ 5:

Ամուսնությունն ի սկզբանե ցմահ միություն լինելով հանդերձ ընտանեկան հարաբերությունների զարգացման և էական փոփոխությունների ենթարկվելու արդյունքում այլևս դադարել է ընկալվել որպես «միություն ամբողջ կյանքի համար»¹¹: Ցավոք նույնը կարելի է ասել նաև ժամանակակից հայ ընտանիքի վերաբերյալ, քանզի ներկայումս մեզանում ևս տարբերություն կա ժամանակակից էգալիտար (ամուսիններից և երեխաներից կազմված ընտանիք) և հին ավանդական ընտանիքների, ընտանեկան մշակույթի, սովորույթների, ամուսնական փոխհարաբերությունների միջև: Ժամանակի ընթացքում փոխվել են նաև ընտանիքում ամուսինների գործառույթները, չնայած այն հանգամանքին, որ մեր երկրում այնուամենայնիվ որոշակիորեն շարունակում են պահպանվել ավանդական ընտանիքից եկող սովորույթներն ու ավանդույթներն: Ներկայումս ընտանեկան հոգեբանության հիմնախնդիրներով զբաղվողները հենվելով իրենց իսկ կողմից կատարված հետազոտությունների արդյունքների վրա հակված են կարծելու, որ ներկայումս «ընտանիքը իսկապես գտնվում է ճգնաժամային վիճակում»¹²:

Ուզում ենք նշել, որ վերը նշված փոփոխությունները ոչ միշտ են հանգեցնում ընտանիքի հիմքերի ամրապնդմանն ու դրա դերի կարևորության մեծացմանը: Նմանօրինակ փոփոխությունների հետևանքներն արդեն իսկ նկատելի են հայ իրականության մեջ: Ցավոք այդ փոփոխությունների հանգեցնում են նաև ամուսնալուծությունների թվի աճին: Այդ միտումը, արդեն 20-րդ դարից սկսած արագ աճ է գրանցում զրեթե բոլոր երկրներում, այդ թվում և մեր երկրում: Մեր երկրում ամուսնալուծությունները սկսեցին ավելի լայն բնույթ կրել հիմնականում 21-րդ դարից սկսած:

Հայտնի հոգեբան Միսենկոն անդրադառնալով ընտանեկան հարաբերությունների էվոլյուցիային նշում է, որ հասարակական զարգացմանը զուգընթաց ձևավորվում են նաև նոր տիպի ամուսնա-ընտանեկան հարաբերություններ, որոնց կրողը հանդիսանում է խոր-

հրդային սերնդի կինը, որը ստացել է կրթություն, մասնագիտություն և տղամարդու իրավունքներին հավասար է բոլոր հարթություններում, թե ֆինանսական և թե սոցիալ-քաղաքական: Ցավոք, այս ամենի հետևանքով մեծ թվով ընտանիքներում առաջանում են բախումներ հին և նոր ամուսնա-ընտանեկան նորմերի շուրջ: Երբեմն ընտանիքը դառնում է մարտադաշտ տղամարդու և կնոջ միջև իշխանության և առաջնության հասնելու համար¹³: Ահա հենց դրանով էլ Միսենկոն բացատրում է ամուսնալուծության բարձր մակարդակը:

Անդրադառնալով միայնակության գաղափարին հոգեբան Գ. Մնացականյանը նշում է, որ այն «...լինելով ընդհանուր երևույթ, տարիքային, ռասայական, դասակարգային սահմաններ չի ճանաչում: Լինելով բարդ զգացում՝ չի նույնացվում ֆիզիկական մեկուսացման հետ. անձը կարող է ապրել մեծ քաղաքում, բազմանդամ ընտանիքում, բայց իրեն միայնակ զգալ, այն սուբյեկտիվ ներքին ապրում է: Ֆիզիկական մեկուսացումը կարող է միայն ուժգնացնել միայնակության զգացումը: Միայնակությունը համալիր և սուր զգացում առաջացնող ապրում է, որը ինքնագիտակցման որոշակի ձև է և անձի ներաշխարհի հարաբերությունների և կապերի հիմնական ցանցի մասնատման ցուցանիշ»¹⁴:

Հետաքրքիր է նկատել, որ հայտնի հոգեբան Ս. Մեդրակյանը ներկայացնում է միայնակ մարդկանց դասակարգումն, ըստ որի .

1. Այն անձինք, ովքեր երբեք չեն ամուսնացել
2. Նրանք, ովքեր ամուսնացել և ապա ամուսնալուծվել են և այժմ մենակ են ապրում
3. Նրանք, ովքեր տարիքի հետ կորցրել են իրենց ամուսիններին (վերջիններս մահացել են):¹⁵

Նման մարդկանց խորհուրդ կտային ծանոթանալ Օնորե դե Բալզակի հետևյալ մտքին «Մենակությունը հիանալի բան է, բայց միշտ

¹¹ Гейжан Н., Тенденции развития семьи и семейного прощшения, Человек и образование, 3(20), Санкт Петербург, 2009, ст. 97.

¹² Гаспарян Ю., Семья на пороге XXI века., Санкт-Петербург, 1999, ст. 45.

¹³ Сысенко В., Супружеские конфликты, Москва, 1989, ст. 3

¹⁴ Մնացականյան Գ., գոյության ձանձրույթ., Երևան, 1997, էջ 15

¹⁵ Մեդրակյան Ս., Սոցիալ-դերային մոտեցումն ընտանիքի հոգեբանության մեջ // Դոկտորական ատենախոսություն, Երևան, 2014, էջ 225

պետք է լինի որևէ մեկը, որին հնարավոր լինի ասել, որ մենակությունը հիանալի բան է»¹⁶:

Է. Էյդեմիլլերի ԱՄՆում և Ռուսաստանում անցկացված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ տեղի բնակչության մեծամասնությունը ներկայումս նախնտրում է էգալիտար ընտանիքը նահապետական ընտանիքից¹⁷: Ցանկանում ենք ավելացնել, որ մեր կողմից անացակացված ուսումնասիրությունները փաստում են այն մասին, որ ՀՀ ում ևս նման միտումը ակնառու է, սակայն ոչ այնքան մեծ չափերով, որպես դրա հետևանք գնալով ավելի ու ավելի են նվազում նահապետական ընտանիքները: Ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ նահապետական ընտանիքներն ավելի մեծ թիվ են կազմում գերազանցապես գյուղական շրջաններում: Յուրաքանչյուր ժամանակաշրջան ունի իր բարքերը, վարքերն ու դիրքորոշումները, որոնք իրենց կնիքն են դնում տվյալ ժամանակաշրջանում ապրող ընտանիքի անդամների փոխհարաբերությունների վրա: Որպես դրա հետևանք ժամանակակից ընտանիքներում ավելի ու ավելի մեծ թիվ են կազմում ազատական մտածելակերպով մարդիկ:

Ժամանակակից ընտանիքը ենթարկվելով զգալի փոփոխությունների ընդունում է նոր ձևեր: Դրանցից ցանկանում ենք առանձնացնել վերջին ժամանակներս ավելի ու ավելի հաճախ նկատվող ամուսնական հարաբերությունների այն ձևը, որը մասնագիտական գրականության մեջ ընդունված է անվանել «քաղաքացիական ամուսնություն»: Ինքնին հասկանալի է, որ ամուսնական հարաբերությունների այս ձևը չէր կարող շրջանցել Հայաստանն ու հայ իրականությունը, ճիշտ է, համեմատաբար փոքր չափերով ու տարածման ծավալներով: Նման ընտանիքներում սկսում է գերիշխել ազատական մտածելակերպը: Հենց նման ազատ մտածելակերպն էլ ընտանեկան հոգեբանության մեջ համարվում է այն հիմնական ու գլխավոր պատճառներից մեկը, որը տանում է ազատ առանց պարտավորությունների քաղաքացիական ընտանիքի ձևավորմանն, ընտանիք, որը հիմնված է ազատ,

առանց նախապաշարումների ընտրության, զգացմունքների ազատ արտահայտման վրա:

Նշենք, որ մենք լիովին կհսում ենք Ցելուկոյի այն տեսակետը, ըստ որի «Ժամանակակից ընտանիքը որպես սոցիալական ինստիտուտ «ապրում է» իր «անցումային փուլը», երբ «հին սովորույթները մոռացվում են և այլևս սպառված են, իսկ նորերը դեռևս ձևավորված չեն»¹⁸ կամ լայն տարածում չունեն: Հայ իրականության մեջ նման փոփոխությունները հանգեցնում են նրան, որ արտերկրից մուտք գործած ավանդույթների կողքին չեն անտեսվում նաև հին պահպանողական ավանդույթները: Ուստի սխալված չենք լինի, եթե նշենք, որ ներկայիս հայկական ընտանիքն արտասահմանյան և ավանդական հայկական ընտանիքների յուրատեսակ խառնուրդ է:

Ընտանիքում տեղի ունեցող անխուսափելի փոփոխություններն ի վերջո հանգեցնում են դրան, որ ընտանեկան հոգսերն ու պարտականություններն աստիճանաբար նոր կերպ են բաժանվում: Ներկայումս կինն ամուսնությունից սպասում է ավելին քան նախկինում: Այս հանգամանքը մեծապես պայմանավորված է նրանով, որ կինը ներկայումս շատ ավելի ազատ է և անկաշկանդ ինչպես իր ցանկությունների, այնպես իր զգացմունքների արտահայտման մեջ: Դրա արդյունքում կինն առաջին հերթին ցանկանում է լինել սիրված ամուսնու կողմից: Ցավոք նման ցանկություններում կարող է հասնել ծայրահեղության, երբ կինը ցանկանում է, որ իրեն սիրեն անկախ իր բոլոր արատներից և թերություններից: Ինքնին հասկանալի է, որ կնոջ նման պահանջումներն ու ցանկությունները զգալի չափով ազդում են ընտանիքի կայունության վրա, քանզի, երբ չեն բավարարվում կնոջ նշված ցանկություններն ու պահանջումները, կինը կարող է դիմել ծայրահեղ, երբեմն անկանխատեսելի քայլերի: Ուստի բավականին դժվար է չհամաձայնվել Շեյնովի այն մտքին, որ «կանայք ոչ մի նշանակություն չտալով իրենց բառերին, այնուամենայնիվ մեծ նշանակություն են տալիս թե ինչ են իրենք լսել»¹⁹:

¹⁶ Гаспарян Ю., Семья на пороге XXI века., Санкт-Петербург, 1999, ст. 3.

¹⁷ Эйдмиллер Э., Системная семейная психотерапия (ред.), СПб., Питер, 2002. Ст. 102.

¹⁸ Целуйко В., Психология современной семьи, Москва 2003, ст. 116.

¹⁹ Шейнов В., Конфликты в нашей жизни и их разрешение, Минск, 1996, ст. 12.

Այդ ամենի արդյունքում ժամանակակից սոցիոլոգների և հոգեբանների պնդմամբ մեր օրերում նկատվում է ընտանիքներում տղամարդու ավտորիտար դերի զգալի անկում, ընդ որում, թե որպես ընտանիքի հայր և, թե որպես ընտանիքի գլուխ: Իսկ ոչ այնքան վաղ անցյալում, ինչպես իրավացիորեն նկատում է Հեգելը «միայն մեկ կամք, հատկապես ընտանիքի գլխավորին պատկանող»²⁰, բնականաբար նկատի ունենալով տղամարդուն: Դրան մեծապես նպաստում է նաև այն հանգամանքը, որ ժամանակակից ընտանիքներում կինը սկսում է զգալի գումար վաստակել, երբեմն նույնիսկ շատ ավելին քան ամուսինը:

Մեր կարծիքով միանգամայն իրավացի պետք է համարել այն պնդումները, ըստ որոնց «տղամարդու և կնոջ դերերի նման փոփոխությունները չէին կարող ցավոտ չանդրադառնալ ավանդաբար ընտանիքի գլխավորը հանդիսացող տղամարդու համար», հենց թեկուզ այն պատճառով որ «տղամարդը երեխաներին է փոխանցում իր ազգանունը դրանով իսկ որոշելով սերունդների միագիծ ուղղվածությունը»²¹:

Մեր օրերում դժվար է որոշել թե հասարակության մեջ ծնողներից ով է ավելի շատ պաշտպանված, մայրը թե հայրը, քանի որ ինչպես իրավացիորեն նկատել է Գասպարյանը «տղամարդիկ զբաղված են աշխատանքի՝ կյանքի համար առավել վտանգավոր ոլորտներում և ավելի շուտ են մահանում»: Իսկ կանայք նույն հեղինակի պնդմամբ «ավելի հաճախ են հիվանդանում, բայց ավելի երկար են ապրում»²²:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս տղամարդու ավտորիտար դերի անկումն աստիճանաբար բայց կայուն տեմպերով ավելի ու ավելի լայն տարածում է գտնում ժամանակակից հայ ընտանիքներում:

Քսաներորդ դարի վերջերին, ինչպես արտասահմանում, այնպես էլ Ռուսաստանում անցկացված սոցիոլոգիական հարցումները միանաշանակ վկայում են, որ «Ընտանիքը տղամարդուն տալիս է ավելին քան կնոջը, տղամարդիկ շատ ավելի բավալարարված են

և քիչ են զգում սիրո պակաս» և որպես դրա հետևանք տղամարդկանց «ավելի քիչ է անհանգստացնում մենակության զգացումը»: Ուստի ամենին էլ պատահական չէ, որ ավելի ու ավելի մեծ թվով տղամարդիկ «իրենց երջանիկ կյանքը կապում են ամուսնության հետ (57 %) իր երջանիկ կյանքը կապում է ամուսնության հետ, համեմատած կանանց(47 %)»²³:

Հետաքրքիր է նկատել, որ որոշ ուսումնասիրողներ հակված են այն կարծիքին թե, ժամանակակից ընտանիքներում «դեռևս շատ բան է կախված կնոջից, նրա տնտեսուհի լինելու ունակությունից» (ընգծումը մերն է Ծ. Ն.) և եթե կինը «ելնելով սկզբունքներից» իրեն այդ ամենից բարձր է դասում, ուստի «այդ ընտանիքը դժվար թե կայուն լինի»²⁴:

Նկատենք, որ ի տարբերություն ժամանակակից ընտանիքներին վերաբերող հոգեբանական և սոցիոլոգիական հետազոտողների Ա, Կազլովը հակված է կարծելու, որ ընտանիքի կայունության հարցում անկախ ամենից կարևորվում է կնոջ «տնտեսուհի լինելու ունակությունը», մի բան, որը հակասության մեջ է մտնում վերն նշված պնդումների հետ: Ուստի մեր կարծիքով անկախ ձևից ժամանակակից ընտանիքների կայունության հիմքում վերը նշված հանգամանքներից բացի լավագույնը պետք է համարել դրանց և վերջինիս ճիշտ գուգակցումը, որն անկասկած այնքան էլ դյուրին գործ չէ:

²⁰ Гегель Г., Работы разных лет. М, 1989. с. 49

²¹ Гаспарян Ю., Семья на пороге XXI века., Санкт-Петербург, 1999, ст.75.

²² Гаспарян Ю., Семья на пороге XXI века., Санкт-Петербург, 1999, ст. 75.

²³ Гаспарян Ю., Семья на пороге XXI века., Санкт-Петербург, 1999, ст.74.

²⁴ Козлов А., Молодой человек: становление образа жизни. ст. 154.